Տարեկան հաշվետվություն
2018

Բովանդակություն

1 | Ռազմավարական հաշվետվություն

Խորհրդի նախագահի ուղերձ 04

Վարչության նախագահի ուղերձ 05

Մեր ձեռքբերումները 06

Շուկայի ուսումնասիրություն 07

Մեր ռազմավարությունը. արժեք ստեղծելու ուղիները 09

Ռազմավարության իրականացման արդյունքները 10

Ֆինանսական արդյունքներ 14

Մեր հաճախորդները 20

Մեր անձնակազմը 21

2 | Կորպորատիվ կառավարում

Մեր բաժնետերերը և խորհուրդը 27

Ռիսկերի կառավարում 29

ՓԼ/ԱՖ քաղաքականություն 30

Ներքին աուդիտի եզրակացություն 31

3 | Ֆինանսական հաշվետվություններ

Անկախ Աուդիտորի հաշվետվություն 33

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 38

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն 39

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 40

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 41

1 | Ռազմավարական հաշվետվություն

Խորհրդի նախագահի ուղերձ 04

Գործադիր տնօրենի ուղերձ 05

Մեր նվաճումները 06

Շուկայի ուսումնասիրություն 07

Մեր ռազմավարությունը. արժեք ստեղծելու ուղիները 09

Ռազմավարության իրականացման արդյունքները 10

Ֆինանսական արդյունքներ 14

Մեր հաճախորդները 20

Մեր անձնակազմը 21

Խորհրդի նախագահի ուղերձ

Վարդան Դիլանյան
«ԱյԴի Բանկ» ՓԲԸ Խորհրդի նախագահ

Ծնվել է 1971թ. հուլիսի 24-ին:
1994թ. ավարտել է Մոսկվայի միջազգային հարաբերությունների պետական ինստիտուտը:
2010թ. ավարտել է «Սկոլկովո» Մոսկվայի կառավարման դպրոցը:
2008թ. նշանակվել է «ԲԻՆԲԱՆԿ» ԲԲԸ նախագահ:
2011թ.-ից աշխատում է «Ակսենչեր» ընկերությունում որպես կառավարիչ-տնօրեն «Ֆինանսական ծառայություններ» գործառնական խմբում:
Ներկայումս հանդիսանում է «Ակսենչեր» ընկերության Ռուսաստանի և Ղազախստանի ներկայացուցչությունների ղեկավար:
2016թ-ին նշանակվել է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ Խորհրդի նախագահ:

Հարգելի ներդրողներ, հաճախորդներ և բաժնետերեր,

Մեր ռազմավարությունն է դառնալ տեխնոլոգիական, նորարարական բանկ, որը, հաշվի առնելով հաճախորդների անհատական պահանջմունքները, նրանց կտրամադրի բարձրակարգ թվային ծառայություններ: Մարդիկ ավելի ու ավելի շատ ժամանակ են անցկացնում համացանցում, և իրենց առօրյա ֆինանսական պահանջմունքները բավարարելու համար ընտրում են թվային հարթակներ: Այսպիսով, բանկերի ապագան պետք է կերտվի այդ հարթակների վրա կամ բանկը պետք է դառնա հենց այդ հարթակը:

Հաշվի առնելով այս տեսլականը, Բանկի ներքին թվային վերափոխմանը զուգահեռ, մենք նախաձեռնել ենք բաց թվային հարթակի ստեղծում՝ համագործակցելով Հայաստանում առաջատար վճարային համակարգի՝ Idram ընկերության հետ: Դա չափազանց մեծ քայլ էր մեր առցանց ներկայությունը ընդլայնելու ուղղությամբ՝ որակյալ հեռակա ծառայություններ մատուցելու և մեր հաճախորդներին մատուցվող ծառայությունների շրջանակը ընդլայնելու հարցում: Կարծում ենք, որ դա մեր երկարաժամկետ աճի գրավականն է. դառնալ ավելի մրցունակ՝ մեր հաճախորդների աճող սպասելիքները բավարարելու համար այսօր և վաղը:

2018 թ.-ին մեր մեծ ձեռքբերումներից մեկը Բանկի ռեբրենդինգն ու նոր ապրանքանիշի և անվանման՝ IDBank-ի ներդրումն էր: Ռեբրենդինգի գործընթացը իրականացվեց հաջողությամբ, և այն զգալիորեն փոխեց հաճախորդների, գործընկերների և բոլոր շահագրգիռ անձանց վերաբերմունքը Բանկի, Բանկի նոր ռազմավարության և առաքելության նկատմամբ:

Ուրախ եմ տեղեկացնել, որ 2018 թ.-ին Բանկն ունեցել է կայուն հաշվեկշռի և մեկ ժամանակաշրջան՝ շահութաբերության բարձր մակարդակով, որը հնարավոր է դարձել բիզնեսի հիմնական ուղղությունների պլանային ցուցանիշների գերազանց կատարման, ծախսերի պրոֆեսիոնալ կառավարման և ռիսկերի արդյունավետ կառավարման համակարգի արդյունքում:

Խորհրդի անունից կցանկանայի շնորհակալություն հայտնել մեր գործընկերներին՝ նրանց ջանքերի, նվիրվածության և տաղանդի համար, որոնք կարևոր նշանակություն են ունեցել 2018 թ.-ին Բանկի առաջընթացի հարցում: Կցանկանայի շնորհակալություն հայտնել նաև մեր հաճախորդներին, ներդրողներին և գործընկերներին նրանց վստահության և հավատարմության համար:

Խորհրդի նախագահ
Վարդան Դիլանյան

Վարչության նախագահի ուղերձը

Միեր Աբրահամյան
Վարչության նախագահ

Ծնվել է 1975թ. հոկտեմբերի 16-ին:
1997թ ավարտել է Երևանի պետական ժողովրդական տնտեսության ինստիտուտի Կառավարման և տնտեսական կապերի ֆակուլտետը:
2004թ. ավարտել է ԱՄՆ Թաֆթս համալսարանի Ֆլետչերի Իրավունքի և Դիվանագիտության դպրոցը, ստացել է CFA I, II մակարդակների որակավորում:
1999թ.-ից աշխատել է ՀՀ կենտրոնական բանկում, 2007–2012թթ.՝ որպես ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական համակարգի կարգավորման վարչության Բանկային համակարգի կարգավորման բաժնի ղեկավար, 2012 – 2018 թթ.՝ Ֆինանսական համակարգի կարգավորման վարչության պետ:
2019թ. նշանակվել է IDBank-ի Վարչության նախագահ:

Հարգելի ներդրողներ, հաճախորդներ և բաժնետերեր,

Ես միացել եմ IDBank-ին 2019 թվականի սկզբից՝ որպես Վարչության նախագահ: Ամփոփելով Բանկի՝ 2018 թվականի կատարողականը՝ առաջին հերթին կցանկանայի շնորհակալություն հայտնել IDBank-ի թիմին՝ ֆինանսական և ռազմավարական նշանակալի ձեռքբերումների համար: Վերջին երկու տարիներին IDBank-ը դինամիկ զարգացել է: Բանկը առաջատար դիրքեր է զբաղեցնում կապիտալի ցուցանիշներով և էականորեն բարելավել է ֆինանսական ցուցանիշները:

IDBank-ն ունի 28-ամյա գործունեության փորձ ՀՀ բանկային համակարգում և լավագույն ձևով կիրառում է այն՝ հետագա զարգացման և ամրապնդման համար: Անկասկած, ռեբրենդինգը նոր շունչ է հաղորդել Բանկի իմիջին ու հեղինակությանը, ինչի արդյունքում IDBank-ն այժմ ընկալվում է որպես նորարար, ժամանակակից բանկ:

Մենք նպատակ չունենք դրանով սահմանափակվելու, և մեր աշխատանքը կշարունակի էական առաջընթաց ապահովել՝ արտացոլելով թվային տեխնոլոգիաների և առավել ծախսարդյունավետ թվային ուղիների կիրառման աճի արդյունքում Բանկի հաջողությունները: Առաջին ընտրության բանկ դառնալու համար IDBank-ն ունի բոլոր նախապայմանները՝ պրոֆեսիոնալ թիմ, ստեղծագործ գաղափարներ, ներդրումներ կատարելու հնարավորություն, բաժնետերերի վստահություն ու աջակցություն: Վստահ եմ, որ մեր համատեղ ջանքերը հնարավորություն կտան մոտ ապագայում իրագործել մեր բոլոր հավակնոտ նպատակները:

Մենք շարունակելու ենք բարելավել հասարակության վստահությունը IDBank-ի գործունեության նկատմամբ՝ հաճախորդներին մատուցելով առավել հարմար և մատչելի ծառայություններ:

IDBank-ի անունից ցանկանում եմ շնորհակալություն հայտնել մեր հաճախորդներին, գործընկերներին և այլ շահագրգիռ անձանց՝ իրենց վստահության և շարունակական աջակցության համար:

Վարչության նախագահ

Միեր Աբրահամյան

Մեր ձեռքբերումները

MOODY'S

- ✓ կոնտրագենտի ռիսկի երկարաժամկետ վարկանիշ (CRRs) **B2**
- ✓ տեղական արժույթով և արտարժույթով ներդրվող ավանդների երկարաժամկետ վարկանիշ **B3**

European Bank for Reconstruction and Development

Բանկը ստացել է ՉՎԵԲ մրցանակը՝ ՉՎԵԲ առևտրի ֆինանսավորման էքսպերտի ոլորտում

BAFT

Բանկը միացել է ֆինանսների և առևտրի բանկային միությանը **(BAFT)**՝ միջազգային համագործակցության զարգացման շրջանակներում:

Information Security Management System ISO 27001 Certified

BSI-ի կողմից Բանկին շնորհվել է Տեղեկատվական անվտանգության կառավարման միջազգային համապատասխանության վկայագիր **ISO/IEC 27001:2013**

CERTIFIED ISO 9001:2015 COMPANY

Բանկը BSI-ի կողմից ստացել է Որակի կառավարման համակարգի վկայագիր **ISO 9001:2015**

AMX Armenia Securities Exchange

Բանկի կողմից թողարկված անվանական արժեկտրոնային պարտատոմսերը ցուցակվել են AMX- ում և ներառված են պարտատոմսերի հիմնական Abond ցուցակում

Համաշխարհային տնտեսություն

ՀՆԱ 2014–2018, %



Աղբյուրը՝ IMF

Գնաճ, միջին սպառողական գներ, %



Աղբյուրը՝ IMF

ՀՆԱ մեկ շնչի հաշվով, ընթացիկ գներով (ԱՄՆ դոլար) 2018 թ.



Աղբյուրը՝ IMF

ՀՀ տնտեսություն

ՀՆԱ ընթացիկ գներով, մլրդ ՀՀ դրամ



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

Միջին տարեկան փոխարժեքներ



Աղբյուր՝ ՀՀ ԿԲ

Բանկերի ակտիվների և վարկերի հարաբերակցությունը ՀՆԱ-ին



Աղբյուր՝ IMF

Մեր ռազմավարությունը: արժեք ստեղծելու ճանապարհը

Ծնվել է 1976թ. մարտի 30-ին:
2001թ. ավարտել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան Պետական Համալսարանի Մեխանիկական-Մաթեմատիկական ֆակուլտետի «Ֆինանսական և ակտուար մաթեմատիկա» բաժինը:
Ունի ավելի քան 17 տարվա միջազգային աշխատանքային փորձ ֆինանսական և ներդրումային ոլորտներում:
2016 թվականին միացել է IDBank-ի թիմին: Ներկայումս հանդիսանում է IDBank-ի Բիզնեսի զարգացման տնօրեն, Վարչության անդամ:

Կարեն Նալբանդյան
Բիզնեսի զարգացման տնօրեն

Մեր ռազմավարությունն ուղղված է հաճախորդներին բարձրակարգ, թվային ուղիներով ծառայությունների մատուցմանը և գործառնական արդյունավետության բարձրացմանը՝ Բանկի ծախսերի արդյունավետ կառավարումն ապահովելու նպատակով: Այդ պատճառով մենք ընդլայնում ենք ներդրումները տեխնոլոգիաների ոլորտում՝ առկա հնարավորությունները բարելավելու և նորերը ստեղծելու նպատակով:

2018-ին մենք հաջողությամբ իրականացրեցինք Բանկի ամբողջական ռեբրենդինգը՝ հիմնվելով մեր նոր ռազմավարության փիլիսոփայության վրա: Այժմ մենք ներկայանում ենք որպես նորարարության վրա հիմնված կառույց և մտադիր ենք լինել ֆինանսական ծառայությունների ոլորտում համաշխարհային նորարարությունների առաջին շարքերում:

Idram-ի հետ համատեղ մեր թվային պլատֆորմի ստեղծումը Հայաստանում 2018-ի ամենակարևոր ֆինանսական տեխնոլոգիական իրադարձությունն էր, որը երկարաժամկետ ազդեցություն կունենա հաճախորդների փորձառության կատարելագործման վրա: Դա մեր հաճախորդների պահանջների շուրջ ֆինանսական էկոհամակարգի ստեղծման առաջին քայլն է:

Հավատարիմ մնալով բազմազան ուղիներով ծառայությունների մատուցման մոդելին՝ մենք շարունակում ենք պահպանել մեր մասնաճյուղային ցանցը: 2018 թվականին սկսեցինք մեր նորարարական ոճին համապատասխան մասնաճյուղերի վերանորոգման գործընթացը:

Կցանկանայի նշել, որ տեխնոլոգիական լուծումները գործիքակազմ են, այլ ոչ թե նպատակ: Սպառողներն են թելադրում փոփոխությունները, և նրանք ողջամտորեն ակնկալում են արագություն, որակյալ ծառայություններ, հարմարավետություն, ճկունություն և անհատական մոտեցում: Խոսքը ոչ թե բանկի, այլ հաճախորդների մասին է, քանի որ նրանք են առաջադրում բարձր պահանջներ և մենք կանենք հնարավոր ամեն ինչ, որպեսզի միշտ համապատասխանենք դրանց:

Մեր ռազմավարական առաջնահերթությունները

Սպասարկման որակի ապահովում. Բազմազան ուղիներով հաճախորդներին գերազանց որակի ծառայությունների մատուցում

Թվայնացում. Թվային տրանսֆորմացիայի արագացում ՝ ակնթարթային, ամբողջությամբ թվային ծառայություններ մատուցելու նպատակով

Կիբերանվտանգություն. Կիբեր պաշտպանության համակարգերի ամրապնդում ՝միջազգային բարձրագույն ստանդարտներին համապատասխանելու համար

Թիմային աշխատանք. ստեղծել ավելի ճկուն թիմ՝ թվային տրանսֆորմացիայի բարձր որակ ապահովելու նպատակով

Ռազմավարության իրականացման արդյունքները

Բանկը մշտապես հավատարիմ է ռազմավարական առաջնահերթությունների իրականացման իր քաղաքականությանը և 2018 թվականը ևս բացառություն չէր: Այժմ կարող ենք փաստել, որ 2018 թ-ին Բանկն իրականացրել է բազմաթիվ հաջողված նախագծեր:

Ոչ ֆինանսական արդյունքներ

Ամբողջական ռեբրենդինգի իրականացում. Մարկետինգային և PR-լայնածավալ արշավներ են իրականացվել տարբեր թվային և արտաքին ուղիների միջոցով (թվային ուղիներ, հեռուստատեսություն, ռադիո, մեդիա, PR, բացօթյա): Իրականացվել են նաև մի շարք ծրագրեր՝ Բանկի կորպորատիվ սոցիալական պատասխանատվության շրջանակներում:

Մասնաճյուղերի համար ստեղծվել է նոր միասնական ոճ: Առաջին նորարարական մասնաճյուղը Վանաձորի մասնաճյուղն է: Նոր ձևաչափի նախագիծն իրականացվում է Էջմիածնի և Աբովյանի մասնաճյուղերում:

Որոշ մասնաճյուղերի տարածքում, ինչպես նաև Երևանի բանուկ վայրերում բանկոմատների փոխարեն ներդրվել են ինքնասպասարկման տերմինալ-բանկոմատներ՝ 24/7 ռեժիմով և կատարելագործված ֆունկցիոնալով:

Ռեբրենդինգից հետո բանկը թողարկել է քարտերի նոր տեսակների, որոնք հաճախորդներին հնարավորություն են տալիս ստանալ մի շարք առավելություններ, մշակվել են Բանկի նոր ոճին համապատասխան և ունեն անհպում վճարումներ իրականացնելու հնարավորություն:

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն, հասարակայնության հետ կապեր

IDBank-ի նախաձեռնությամբ Երևանի Անգլիական այգին վերածվեց փոքր ֆուտբոլային քաղաքի, որտեղ հունիսի 14-ից մինչև հուլիսի 15-ը մարդիկ կարող էին հետևել 2018թ. ֆուտբոլի աշխարհի գավաթի խաղերին:

IDBank-ը կարևորում է բարեգործական նախաձեռնությունները: Բանկի աջակցությամբ Վորլդ Վիժն Հայաստանի միջոցով կարիքավոր ընտանիքներից 150 երեխա մեկնեցին #DreamCamp:

Բանկում կարծում են, որ երեխաների առողջության, կրթության, զարգացման և վերապատրաստման համար համապատասխան պայմանների ստեղծումը կարևոր ներդրում է ապագայի համար: IDBank-ը վճարում է 50 երեխայի բուժման կուրսերի համար՝ «Բարի Մամա»-ի հետ համագործակցության շրջանակներում:

Բանկը կարևորում է առողջ ապրելակերպի պահպանումը և ակտիվորեն նպաստում է Հայաստանում սպորտի զարգացմանը: IDBank-ի աջակցությամբ Հայաստանի Taekwon-do միջազգային ֆեդերացիան (ITFA) նախաձեռնել է Երևանում անցկացնել թեքվոնդոյի Եվրոպայի բաց առաջնություն: ITF Taekwondo-ի ազգային հավաքականը Բանկի աջակցությամբ մասնակցել է ԱՊՀ բաց գավաթ - ITF Taekwondo World Cup- ին:

Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն, հասարակայնության հետ կապեր

IDBank-ը զրոյացրեց ֆիզիկական անձանց խնդրահարույց վարկերի համար կուտակված տույժերը: Բանկը վարում է զիջումների քաղաքականություն՝ այդպիսով պարտապաններին հնարավորություն տալով լուծել վճարունակության խնդիրները՝ իրենց հնարավորությունների և ողջախոհության շրջանակներում:

Կարևորելով Հայաստանում ֆրանչայզինգի զարգացման հեռանկարները, ինչպես նաև ամերիկացի գործարարների հետ հայ ներդրողների հարաբերությունների ակտիվացումը՝ Հայաստանում Ամերիկյան դեսպանատունը, IDBank-ի աջակցությամբ, կազմակերպեց ֆրանչայզինգի ֆորում:

Որպես նորարար բանկ, IDBank-ը մեծ ուշադրություն է դարձնում երեխաների ներգրավվածությանը ՏՏ ոլորտում, քանի որ գրեթե անհնար է դառնում արագ զարգացող ժամանակակից միջավայրում մրցակցային լինելու՝ առանց ՏՏ ոլորտի խորը գիտելիքների՝ անկախ ընտրված մասնագիտությունից:

Բանկն իրականացրել է սոցիալական աջակցության ծրագիր՝ «Իրականացնել երազանքը» խորագրով: Այս ծրագրի շրջանակներում Բանկի աշխատակիցները պատրաստել էին նվերներ Տավուշի մարզի Բերքաբեր գյուղի երեխաների համար:

Marketplace-ի՝ նոր բաց թվային հարթակի ստեղծում

Սմարթֆոններն արդեն ներգրավված են մեր առօրյա կյանքում. մարդիկ կարող են արագ վճարումներ և փոխանցումներ կատարել հեռահար միջոցներով՝ առանց բանկ այցելելու անհրաժեշտության: IDBank-ը կարևորում է նորարարական տեխնոլոգիական լուծումների կիրառումը՝ հաճախորդների ֆինանսական պահանջմունքները լավագույնս բավարարելու նպատակով:

Օգտատերերին հարմար է օգտագործել մեկ ընդհանուր և հարմար առցանց ինտերֆեյս՝ թվային հարթակ: Հենց դա էր պատճառը, որ Բանկը և Idram-ը որոշեցին համատեղ ստեղծել նման հարթակ՝ Marketplace, որը թույլ կտա օգտատերերին հեռակա կարգով հաշիվ բացել համակարգում՝ օգտագործելով բջջային հավելվածը և վեբ ինտերֆեյսը, ավելացնել ցանկացած միջազգային վճարային քարտ, կատարել վճարումներ և փոխանցումներ, ճկուն կառավարել իրենց ռեսուրսները, վճարել ավելի քան 200 ծառայությունների համար, ստանալ Idram-ի գործընկերներից առցանց վարկեր, իրականացնել վարկային պարտավորություններ, գումար փոխանցել բանկային հաշիվներին, կատարել անհպում վճարումներ գործընկեր խանութներում և ռեստորաններում, հետ ստանալ կանխիկ դրամական միջոցներ և բազմաթիվ այլ առավելություններ: Այսպիսով, Բանկը և Idram-ը համաձայնել են օգտագործել համագործակցության այնպիսի ձևաչափ, որտեղ կողմերը առաջարկում են իրենց լուծումները և ծառայությունները ընդհանուր թվային հարթակում: Idram-ի հաճախորդները Բանկից կստանան լրացուցիչ բանկային ծառայություններ, իսկ Բանկի հաճախորդները կկարողանան արագ օգտվել Idram-ի առաջարկած հնարավորություններից:

Ֆինանսական արդյունքներ

Ծնվել է 1976 թ.-ի նոյեմբերի 5-ին: Ավարտել է Երևանի պետական համալսարանի «Ընդհանուր տնտեսագիտություն» ֆակուլտետը, Ավարտել է Բեռլինի տեխնիկական համալսարանի տնտեսագիտության ֆակուլտետը:
2013-ին նշանակվել է IDBank-ի ֆինանսական տնօրեն՝ Վարչության անդամ, 2017-2019 թվականներին՝ Վարչության նախագահի պաշտոնակատար:
Ներկայումս հանդիսանում է Վարչության նախագահի տեղակալ, ֆինանսական գծով տնօրեն, Վարչության անդամ:
FCCA- ի անդամ է:

Ռուբեն Մելիքյան
Վարչության նախագահի տեղակալ,
Ֆինանսական գծով տնօրեն, FCCA

2018 թվականին Բանկն իսկապես ունեցել է մեծ ֆինանսական և ոչ ֆինանսական ձեռքբերումներ, որոնք, իհարկե, հաճախորդների հետ սերտ համագործակցության, ռեբրենդինգի և նորարարական ռազմավարության հետևանք են:

2018 թվականին Բանկի շահույթը 2017 թվականի համեմատ աճել է 18,2% -ով և կազմել 2.2 մլրդ դրամ:

Ակտիվների որակը շարունակում է բարելավվել՝ արտացոլելով վարկավորման գործընթացի կարգավորման լավ մակարդակը; վարկային քաղաքականությունը մշակելիս մենք բացառապես առաջնորդվել ենք որակական ցուցանիշների և գործունեության արդյունավետության ապահովման տեսլականով:

Հաճախորդներին տրամադրվող վարկերի ծավալը 2017-ի համեմատ 2018-ին աճել է 6,4%-ով, և միաժամանակ պահպանվել է Բանկի կապիտալի համարժեքության բարձր ցուցանիշը, ինչը խոսում է Բանկի քաղաքականության պատշաճ իրականացման և Բանկի կայունության մասին: Կապիտալի համարժեքության նորմատիվը կազմել է 38.3%, ինչը զգալիորեն գերազանցում է սահմանված նվազագույն պահանջները:

Կարող ենք նշել, որ Բանկին կրկին հաջողվել է արձանագրել ֆինանսական գործունեության լավ արդյունքներ՝ ապահովելով եկամուտների և շահույթի աճ: Ներկայիս ցուցանիշները հաշվի առնելով՝ մենք կարող ենք վստահորեն նշել, որ այս միտումը կպահպանվի նաև ապագայում: Մեր նոր քաղաքականությունը, համաձայն որի յուրաքանչյուր հաճախորդի անհատական մոտեցում է ցուցաբերվում, յուրաքանչյուր հաճախորդ ստանում է նոր և արդի լուծումներ և պրոդուկտներ, արդեն տալիս է իր արդյունքները:

Վարչության նախագահի տեղակալ,

Ֆինանսական գծով տնօրեն

Ռուբեն Մելիքյան

Զուտ տոկոսային եկամուտ (մլն ՀՀ դրամ)



Շահույթ տարվա համար (մլրդ ՀՀ դրամ)



Ընդամենը ակտիվներ (մլրդ ՀՀ դրամ)



Ընդամենը պարտավորություններ (մլրդ ՀՀ դրամ)



Ընդամենը կապիտալ (մլրդ ՀՀ դրամ)



Թողարկված պարտատոմսեր[1] (մլրդ ՀՀ դրամ)



1. Բանկը իր պատմության ընթացքում առաջին անգամ թողարկել և տեղաբաշխել է պարտատոմսեր 2016 թվականին:

Վարկային պորտֆել

Հաճախորդներին տրված վարկեր, մլն ՀՀ դրամ



2018-ին հաճախորդներին տրամադրված վարկերի ծավալն աճել է 6.4% -ով և կազմել 61,471 մլն ՀՀ դրամ

Համախառն վարկային պորտֆելի կառուցվածք| 2018, %

Կորպորատիվ հաճախորդներին տրված վարկեր
41,5 մլրդ ՀՀ դրամ

Անհատներին տրված վարկեր
29,7 մլրդ ՀՀ դրամ



Մեր դիրքը Հայաստանի բանկային ոլորտում

Ընդամենը ակտիվներ



Աղբյուր՝ Arminfo, IDBank

Բանկային ոլորտի ընդհանուր ակտիվները 2018 թվականին նախորդ տարվա համեմատ աճել են 14.7% -ով և կազմել 4,964 մլրդ ՀՀ դրամ:
2.5% շուկայի մասնաբաժնով Բանկը 15-րդ դիրքում է:

Ընդամենը պարտավորություններ



Աղբյուր՝ Arminfo, IDBank

Բանկային ոլորտի ընդհանուր պարտավորությունները 2018 թվականին նախորդ տարվա համեմատ աճել են 15,4% -ով և կազմել 4,192 մլրդ ՀՀ դրամ:
Բանկը 2,0% շուկայի մասնաբաժնով 15-րդ դիրքում է:

Ընդամենը կապիտալ



Աղբյուր՝ Arminfo, IDBank

Բանկային հատվածի ընդհանուր կապիտալը 2018 թվականին նախորդ տարվա համեմատ աճել է 11,1% -ով և կազմել 771 մլրդ ՀՀ դրամ:
Բանկը 5,7% շուկայի մասնաբաժնով 7-րդ դիրքում է:

Հիմնական տնտեսական նորմատիվներ

Բանկի ֆինանսական կայունությունը բնութագրող երկու ցուցանիշները՝ կապիտալի համարժեքությունը և իրացվելիությունը, գտնվում են պահանջվող նվազագույն մեծությունից և բանկային համակարգի համապատասխան ցուցանիշներից բարձր մակարդակում: 2018-ի տարեվերջին կապիտալի համարժեքության նորմատիվը կազմել է 38.3%[1], իսկ ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նորմատիվները՝ համապատասխանաբար 31.1% և 268.1%[2]:

Կապիտալի համարժեքության նորմատիվ Ն1(2)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, IDBank

Ընդհանուր իրացվելիության նորմատիվ Ն2(1)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, IDBank

Ընթացիկ իրացվելիության նորմատիվ Ն2(2)



Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, IDBank

1. Պահանջվող նվազագույն մեծությունը 12% է:
2. Պահանջվող նվազագույն մեծությունները համապատասխանաբար 15% և 60% են:

Մեր հաճախորդները

18,737

Նոր հաճախորդներ

2018-ին բանկը ներգրավել է 18,737 նոր հաճախորդ, ինչը 1.300 հաճախորդով ավելի է, քան նախորդ տարի:

Բանկը հայտարարել է իր հաճախորդակենտրոն քաղաքականության մասին, և մենք վերափոխում ենք ինքներս մեզ թվային և նորարարական կազմակերպության՝ մեր հաճախորդների աճող պահանջմունքները բավարարելու համար:
Բանկի կողմից մատուցվող ծառայություններից հնարավորինս հարմարավետ օգտվելու նպատակով Բանկն այժմ առաջարկում է հետևյալ հիմնական ուղիները.

Մասնաճյուղերը

Բանկը ծառայություններ է մատուցում Երևանում և մարզերում գտնվող իր 14 մասնաճյուղերի միջոցով: Ռեբրենդինգից հետո Բանկը սկսել է վերափոխել մասնաճյուղերը՝ նպատակ ունենալով նորարարական միջավայրում հետաքրքիր տեխնոլոգիական լուծումների միջոցով հաճախորդներին բարձրակարգ ծառայություններ մատուցել և դրանով իսկ հաճախորդների համար առավել հաճելի դարձնել Բանկ այցելությունը:
Մենք հավատում ենք, որ թվային բանկինգի դարաշրջանում մասնաճյուղերում շեշտը պետք է դրվի պրոդուկտների և ծառայությունների վերաբերյալ խորհրդատվություն տրամադրելու և հաճախորդների հետ անմիջական կապը պահպանելու վրա:

Արտոնյալ բանկային ծառայություն

Բանկը ձգտում է դառնալ գործընկեր իր հաճախորդների համար, և ոչ թե լինել պարզապես ֆինանսական հաստատություն: Անհատական բանկային ծառայությունների մատուցումը, որն իրականացվում է անցյալ տարվա դեկտեմբերից, իր մեջ ներառում է ծառայությունների փաթեթ՝ բազմաթիվ արտոնություններով: Այնուամենայնիվ, այսպիսով Բանկը նպատակ չի հետապնդում ավելացնել իր շահույթը, այլ նպատակ ունի հաճախորդների համար ստեղծել հարմարավետ պայմաններ և անհատական մոտեցում ցուցաբերել յուրաքանչյուրին:

IDBanking 24/7 գոտի

24/7 ինքնասպասարկման գոտիների շնորհիվ մեր հաճախորդները կկարողանան կատարել այնպիսի բանկային գործարքներ, ինչպիսիք են կանխիկացումը և ավանդի ներդրումը, վարկերի մարումը, տարբեր տեսակի հաշիվների համալրումը, կոմունալ վճարումների կատարումը և 200+ այլ գործարքներ՝ ամեն օր, օրվա ցանկացած պահի:

Առցանց բանկային ծառայություններ

Բանկն առաջարկում է մի շարք առցանց բանկային ծառայություններ և շարունակաբար քայլեր է ձեռնարկում դրանց ընդլայնման ուղղությամբ: Բանկն արդեն հայտարարել է Idram-ի հետ թվային պլատֆորմի ստեղծման մասին՝ հաճախորդներին ակնթարթային և պարզ թվային լուծումներ տրամադրելու նպատակով:

Մեր անձնակազմը

Ծնվել է 1983 թ. հուլիսի 27-ին
Ավարտել է Երևանի լեզվաբանական համալսարանը՝ երկակի մագիստրոսի կոչում ստանալով լեզվաբանության և մանկավարժության գծով:
Մարդկային ռեսուրսների և վերապատրաստման ոլորտում ունի ավելի քան 10 տարվա միջազգային փորձ: 2018-ին նշանակվել է IDBank-ի մարդկային ռեսուրսների կառավարման վարչության ղեկավար:

Սոնա Մանուչարյան
Մարդկային ռեսուրսների կառավարման վարչության ղեկավար

Թեև կայուն ընկերություն ստեղծելը ընկած է մեր գործունեության հիմքում, մեր թիմը մեր ամենակարևոր արժեքն է: Արագ զարգացող միջավայրում մեր թիմի շնորհիվ օր օրի ավելի ուժեղ ենք դառնում, և թիմի միջոցով է, որ Բանկի ռազմավարություն ու բիզնեսի առաջնահերթություններն իրականություն են դառնում:

Մենք ձգտում ենք լինել օրինակելի աշխատատեղ մեր աշխատակիցների համար՝ ամեն կերպ աջակցելով նրանց լինել լավագույնը իրենց աշխատավայրում, որտեղ յուրաքանչյուրը իրեն գնահատված և ներգրավված է զգում և կարող է կառուցել իր կարիերան. միաժամանակ մենք պատրաստ ենք ապահովել մեր աշխատակիցների ֆիզիկական, ֆինանսական և հոգեկան բարեկեցությունը իրենց անձնական կյանքում:

Ողջ տարվա ընթացքում մենք մեծ ջանքեր ենք գործադրել մեր թիմի հին և նոր անդամներին միավորելու համար՝ բազմաթիվ մոտիվացնող և թիմային միջոցառումների անցկացման, զարգացման, մասնագիտական աճի և հաջողության հասնելու հնարավորությունների ստեղծման միջոցով: Այս գործընթացը սկսվում է այն պահից, երբ աշխատակիցներն առաջին անգամ միանում են ընկերությանը կամ ստանձնում են նոր պաշտոն: Աշխատակիցների ադապտացման և մենթորության նորացված ռեսուրսներով մենք ավելի ինտերակտիվ ենք և ՄՌ թիմի անդամների աշխատանքով օգնում ենք Բանկի թիմին նոր միացած անձանց. ինչպես նաև Բանկի բոլոր աշխատակիցներին՝ իրենց դերերի ու պարտականությունների իրականացման գործընթացում:

Մեր ղեկավարները կարևոր ներդրում ունեն մեր ընկերության մշակույթի ձևավորման, ինչպես նաև մեր բացառիկ տաղանդներին իրենց կարիերայի զարգացման ընթացքում աջակցելու հարցում: Կառավարման բոլոր մակարդակներում բաց դռների քաղաքականությունն ու հասանելիությունը հնարավորություն են տալիս աշխատակիցներին մշտապես հանդես գալ նորարարական գաղափարներով, կաղապարներից դուրս մտածելակերպով՝ կատարելագործվելով իրենց կողմից իրականացվող աշխատանքում:

Մարդկային ռեսուրսների կառավարման վարչության ղեկավար
Սոնա Մանուչարյան

Անձնակազմի կառուցվածքը

417

Բանկի աշխատակիցների
փաստացի թվաքանակը
2018-ի վերջի դրությամբ

Աշխատակիցների կազմն ըստ տարիքի, %



Ղեկավար աշխատակիցների կազմն ըստ տարիքի, %



Աշխատակիցների կազմն ըստ սեռի, %



Ղեկավար աշխատակիցների կազմն ըստ սեռի, %



Թիմային և կորպորատիվ մշակույթ

Մենք Թիմ ենք – սա Բանկի հիմնական արժեքներից մեկն է և իր ազդեցությունն ունի Բանկի գործունեության բոլոր ոլորտների վրա՝ որպես կայացած և մարդկային կապիտալի վրա հիմնված գործատու:

Բանկը մեծ ջանքեր է գործադրում կորպորատիվ մշակույթի ամրապնդման ուղղությամբ՝ խթանելով և պահպանելով այնպիսի մթնոլորտ, որտեղ բոլոր աշխատակիցները իրենց գնահատված են զգում և պատրաստ են ջանքեր գործադրել ընկերության հաջողության համար: Բանկը հենց իր աշխատակիցների միջոցով է առաջընթաց գրանցում և հասնում բարձր արդյունքների տարբեր ոլորտներում:

Ողջ տարվա ընթացքում Բանկը կազմակերպել է տարբեր միջոցառումներ՝ թիմային ոգին բարձրացնելու և ամբողջ թիմին առավել դրական էներգիա փոխանցելու համար: Դրանց թվում էին՝ կանանց, Բանկի աշխատակիցների երեխաների համար նախապատրաստված անակնկալները, բոլոր աշխատակիցներին Բանկիրների օրվա ընթացքում իրենց ջանքերի համար գնահատելը, ինչպես նաև կազմակերպված կորպորատիվ երեկույթները և էքսկուրսիաները :

Ամբողջ տարվա ընթացքում Թիմը միավորվել է նաև խոշոր կորպորատիվ սոցիալական պատասխանատվության միջոցառումներ կազմակերպելու և իրականացնելու գործում՝ տարին ավարտելով Բանկի աշխատակիցների և ղեկավար կազմի ջանքերով Տավուշի մարզի սահմանամերձ Բերքաբեր համայնքի ավելի քան 50 երեխաների ամանորյա նվերների երազանքները իրագործելով:

Բանկի ղեկավարության ամենօրյա գործունեությունն ու գործողությունները ուղղված են Բանկը և՛ զվարճալի, և՛ մոտիվացնող աշխատավայր դարձնելուն: Քայլեր են ձեռնարկվում աշխատողների հաջողությունները և նրանց համար կարևոր տեղեկատվությունը ներքին օրաթերթի, Բանկի ներքին պորտալի և Բանկի Միջոցառումների կազմակերպման կոմիտեի միջոցով տարածելու ուղղությամբ:

Այս ամենը իրականացվում է յուրաքանչյուր աշխատողի մեջ այն գաղափարը սերմանելու նպատակով, որ նա Բանկի դեսպան ու խոսնակն է, որտեղ էլ որ լինի, և պետք է հպարտորեն ու դրական կողմից ներկայացնի իր աշխատավայրը:

Վարձատրություն և մոտիվացիա

Մեր աշխատակիցները մեր ամենամեծ ակտիվն են, և նրանց ջանքերի և ներդրման շնորհիվ մենք ավելի ուժեղ և դինամիկ ենք դառնում մեր նպատակներին հասնելու ճանապարհին:

Բանկը աշխատակիցներին խրախուսում է ինչպես ֆինանսական, այնպես էլ ոչ ֆինանսական եղանակներով: Բանկի արտոնությունների փաթեթը մշտապես վերանայվում և թարմացվում է՝ ներառելով առողջության ապահովագրության փաթեթ, ֆինանսական աջակցություն աշխատողներին կյանքի կարևոր իրադարձությունների ժամանակ, առողջ ապրելակերպի խրախուսում՝ տարբեր ֆիթնես ակումբների հետ համագործակցության միջոցով, Բանկի ճաշարանում առողջ սնունդ և այլն:

Բոնուսային և KPI համակարգերը գործում են ինչպես հաճախորդների սպասարկում իրականացնող, այնպես էլ աջակցող ստորաբաժանումների աշխատակիցների համար, ինչը նպաստում է արդյունավետության բարձրացմանը և բոլոր ոլորտներում ավելի լավ արդյունքների ձեռքբերմանը:

Բանկն անց է կացնում տարեկան հարցում՝ պարզելու բարելավման կարիք ունեցող ոլորտները և հնարավորություն է տալիս յուրաքանչյուր աշխատակցի բարձրաձայնել իր կարծիքը:

Բանկի վարձատրության քաղաքականության համար ուղեցույց է ֆինանսական համակարգի կողմից առաջարկվող աշխատավարձերի և արտոնությունների տարեկան վերլուծությունը՝ փոփոխություններին պարբերաբար հետևելու և շուկայում առաջատար լինելու համար:

Աշխատակիցների ներգրավման քաղաքականություն

Տաղանդների հավաքագրումը շարունակում է մնալ կարևոր առաջնահերթություն Բանկի համար: 2018 թվականին առաջնահերթ խնդիր էր սպասարկում իրականացնող ստորաբաժանումներում և գործառնական բաժիններում թափուր հաստիքների համալրումը, ինչպես նաև Բանկի թվայնացման ոլորտում աճող պահանջարկը բավարարելու համար տաղանդավոր աշխատակիցներին աշխատանքի ընդունումը:

Ներքին առաջխաղացումները կարևոր դեր են խաղում բարձրակարգ և տաղանդավոր աշխատակիցներին, նրանց գիտելիքները և փորձը Բանկում պահելու հարցում: 2018-ին մենք շարունակեցինք մշակել և ներդնել մեր ներքին առաջխաղացումների ռազմավարությունը՝ պահպանելով մեր թափուր աշխատատեղերը նախևառաջ համապատասխան ներքին թեկնածուներով համալրելու մեր մոտեցումը: Բոլոր թափուր պաշտոնները նախ հայտարարվում են Բանկի աշխատակիցներին՝ առաջինը դիմելու հնարավորություն ընձեռնելով նրանց: Ներքին թեկնածուներին առաջնահերթություն տալը վերակազմավորումից տուժած աշխատողներին օգնում է բանկում գտնել նոր հաստիքներ:

Բանկը թափանցիկ է աշխատակիցների ներգրավման իր քաղաքականության մեջ, հավասար և արդար հնարավորություն է տրվում յուրաքանչյուր դիմորդի: Բանկը բաց է նոր շրջանավարտների և անփորձ աշխատողների համար և ճանաչված է ֆինանսական շուկայում՝ այդ գործողությունների միջոցով գործազրկության մակարդակի իջեցմանն ուղղված ջանքերի համար:

Բոլոր նոր աշխատակիցների սահուն մուտքը Բանկ ապահովելու համար տարբեր քայլեր են ձեռնարկվում: Լավ մշակված Մենթորական ծրագիրը աշխատակիցներին հնարավորություն է տալիս համագործակցել փորձառու մենթորի հետ իրենց աշխատանքի առաջին 90 օրվա ընթացքում՝ ստանալով տեսական և գործնական գիտելիքներ ու հմտություններ:

Կարիերայի աճ

Մենք ուժեղ ենք մեր բազմազան և աճող թիմի շնորհիվ: 2018-ին Բանկին միացան բազմաթիվ պրոֆեսիոնալ թիմակիցներ: Այդուհանդերձ, կարևորում ենք նաև ներքին առաջխաղացումները: Տարվա ընթացքում ավելի քան 80 ներքին առաջխաղացում է իրականացվել:

Մենք գնահատում ենք մեր աշխատակիցների ուժեղ կողմերը և տարբերությունները, բայց միևնույն ժամանակ մեծ ջանքեր ենք գործադրում մշտական մասնագիտական աճ ապահովող դասընթացների կարևորությունը ընդգծելու համար՝ օգտագործելով ինչպես ներքին, այնպես էլ արտաքին ռեսուրսները, գիտակցելով, որ դրանք նպաստում են թիմի պոտենցիալի աճին, մասնագիտական հմտությունների զարգացմանը՝ ֆինանսական ոլորտում հիմնական առաջընթացին և նորարարություններին համընթաց:

Բանկը բոլոր աշխատակիցներին խրախուսում է լինել ակտիվ, մասնակցել ինչպես զարգացման, այնպես էլ հաճախորդների սպասարկման և վաճառքի վերաբերյալ դասընթացներին՝ նոր գիտելիքներ ձեռք բերելու և թիմային աշխատանքի և ոգու ամրապնդման համար: Մենք գնահատում ենք մեր ղեկավար կազմի մշտական զարգացումը՝ դրանով խթանելով մեր մշտական աշխատողների հետագա զարգացումը, ինչպես նաև խրախուսում ենք մեր ղեկավար կազմին՝ մասնակցելու ինչպես Հայաստանում, այնպես էլ Հայաստանից դուրս անցկացվող միջազգային դասընթացներին:

Իրականացման դասընթացների ոլորտները, ի թիվս այլոց, ներառում են հաշվապահական հաշվառման, արդյունքների գնահատման, մարդկային ռեսուրսների միտումների և անձնակազմի զարգացման, թվայնացման, բանկային պրոդուկտների և ծառայությունների մասին գիտելիքների կատարելագործման, բանակցությունների և հաճախորդների սպասարկման հմտությունների ոլորտները՝ շեշտը դնելով որակյալ ծառայությունների մատուցման և խաչաձև վաճառքների հնարավորությունների վրա:

Ընդհանուր առմամբ, ավելի քան 90 դասընթացներ են անցկացվել Բանկում, մասնագիտական ուսումնական կենտրոններում և Հայաստանից դուրս:

Համագործակցություն համալսարանների հետ

Համալսարանների հետ համագործակցությունը, նոր շրջանավարտների և բարձր ներուժ ունեցող ուսանողների առջև դռներ բացելը, ինչպես նաև կրթության կարևորումը Բանկի կարևորագույն առաջնահերթություններից են: Տարիների ընթացքում Բանկն ակտիվորեն համագործակցում է մի շարք բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ, մասնավորապես՝ ԵՊՀ, ՀՊՏՀ, Հայաստանում ֆրանսիական համալսարանի հիմնադրամ, Ամերիկյան համալսարան և կարիերայի կենտրոններ:

Բանկը նաև ակտիվ մասնակցություն է ունեցել համալսարաններում «Կարիերայի օր» կոչվող միջոցառումներին՝ ուսանողներին ներկայացնելով մեզ հետ կարիերա ստեղծելու հնարավորությունները:

Այս համագործակցության շրջանակներում ուսանողները կարող են միանալ մեզ ոչ միայն համալսարանական պրակտիկայի, այլև Բանկի տարբեր բաժիններում անցկացվող կարճաժամկետ և երկարաժամկետ պրակտիկայի միջոցով: 2018 թ-ին 15 ուսանող ներգրավվել է Բանկի աշխատանքային գործընթացում, հաճախել պրակտիկ դասընթացների, և նրանցից լավագույնները Բանկի կողմից հետագայում աշխատանքի են ընդունվել: Բանկի համար կրթության ոլորտի կարևորությունը միշտ էլ առաջնահերթություն է եղել, և նոր հնարավորություններ և ծրագրեր են նախատեսվում 2019 թվականի համար:

2

Կորպորատիվ կառավարում

Մեր բաժնետերերը և խորհուրդը	27
Ռիսկերի կառավարում	29
ՓԼ/ԱՖ քաղաքականություն	30
Ներքին աուդիտի եզրակացությունը	31

Մեր բաժնետերերը և խորհուրդը

Մեր բաժնետերերը

Մեր խորհուրդը

Բանկի խորհուրդը իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը `Խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի շրջանակներում՝ համաձայն օրենքի և Բանկի կանոնադրության:

Խորհրդի լիազորություններից են՝

1. Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ ռազմավարական զարգացման ծրագրի հաստատումը,
2. Բանկի գործադիր մարմնի անդամների նշանակումը,
3. Բանկում ներքին հսկողության ստանդարտների հաստատումը,
4. շահաբաժինների վճարման վերաբերյալ Ընդհանուր Ժողովին առաջարկությունների ներկայացումը,
5. Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և Ընդհանուր Ժողովին ներկայացումը,
6. Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման վերաբերյալ որոշումների կայացումը,
7. Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը,
8. Օրենսդրությամբ սահմանված դեպքերում շահագրգռվածության առկայությամբ գործարքների կնքումը,
9. Օրենքով և Բանկի կանոնադրությամբ սահմանված այլ հարցերի վերաբերյալ որոշումների կայացումը:

Խորհրդի անդամները

Վարդան Դիլանյան

Խորհրդի նախագահ

2011-ին միացել է Accenture- ին `որպես Ռուսաստանի Դաշնության Ֆինանսական ծառայություններ խմբի գործադիր տնօրեն: Ներկայումս հանդիսանում է «Accenture»-ի ներկայացուցչության ղեկավարը Ռուսաստանում և Ղազախստանում:

Կարեն Մարգարյան

2003-ին միացել է Համաշխարհային էկոնոմիկայի R&D ինստիտուտին (Մոսկվա): Ներկայումս Համաշխարհային էկոնոմիկայի R&D ինստիտուտի տնօրենն է և աշխատում է Մոսկվայի ֆինանսահիրավական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ամբիոնում `որպես պրոֆեսոր:

Մաքսիմ Մորոզով

2018 թ.-ին միացել է բելոռուսական «Պարիտետբանկ»-ին: Ներկայումս հանդիսանում է «Պարիտետբանկ»-ի Վարչության նախագահի խորհրդական:



Ալեքսանդր Խաչատուրյան

2018 թվականից աշխատում է Թի Քեյ ընդ Փարթներս/ TK and Partners/ ՓԲԸ-ում `որպես գործընկեր: Ներկայումս հանդիսանում է «Հայաստանի տնօրենների ինստիտուտի» հիմնադիր անդամ, «Հայաստանի էներգետիկ գործակալության» խորհրդի անդամ:

Մազեն Ա. Շեհայեբ

2010 թ.-ին միացել է լիբանանյան «Կրեդիտ բանկ» Ս.Ա.Լ-ին: Ներկայումս հանդիսանում է Լիբանանի «Կրեդիտ բանկ» Ս.Ա.Լ-ի արտաքին դուստր ձեռնարկությունների համակարգման ղեկավարը:

Ռիսկերի կառավարում

Rafik Suvaryan
Risk Management Director

Ծնվել է 1986 թ.-ի մայիսի 10-ին,
2008թ. ավարտել է Ռուսաստանի Դաշնության կառավարությանը կից Ֆինանսական համալսարանը՝ բանկային ռիսկերի կառավարում մասնագիտությամբ:
2010 թ. ավարտել է Ֆլեթչերի Իրավագիտության և Դիվանագիտության դպրոցի ուսումնական ծրագիրը, Թաֆթսի համալսարան, ԱՄՆ:
2008-ին իր կարիերան սկսել է Ռուսաստանում «Տրոյկա Դիալոգ» ներդրումային ընկերությունում:
2009 թ.-ին վերադարձել է Հայաստան և միացել է ՊրոԿրեդիտ բանկի ռիսկերի խմբին, իսկ 2010-ին միացել է ՎՏԲ բանկին, որտեղ աշխատել է որպես ռիսկերի վերլուծության ղեկավար:
2014-ին միացել է IDBank-ին: Ներկայումս հանդիսանում է Ռիսկերի գլխավոր պատասխանատու, IDBank-ի Վարչության անդամ:

Բանկի կողմից ռիսկերի ստանձնման կարողությունը մոնիթորինգի է ենթարկվում՝ Ռիսկերի կառավարման ինտեգրված համակարգի միջոցով: Դրա շրջանակներում մենք պարբերաբար հսկողություն են իրականացնում մի շարք ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի նկատմամբ՝ ապահովելով Բանկի ռիսկայնության մակարդակի համապատասխանությունը Բանկի ռիսկի ախորժակին: Բանկի ռիսկի ախորժակը, որը հաստատվում է ինչպես Խորհրդի, այնպես էլ Վարչության կողմից, սահմանում է Բանկի ռիսկայնության մեր ընդունելի մակարդակը և տեղեկացնում ռազմավարական և ֆինանսական պլանավորման գործընթացի մասին: Այն նախագծված է այնպես, որ Բանկը կարողանա դիմակայել շուկայի անկայունությանը և սթրեսային իրավիճակներին՝ միաժամանակ ապահովելով համապատասխանությունը օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

Վարկային ռիսկի կառավարում՝

- ✓ Վարկային ռիսկի կառավարում պորտֆելի մակարդակով; վարկային ռիսկի գնահատման մոդելների, վարկանիշային մոդելների մոնիթորինգ և վերահսկում
- ✓ Վարկային ռիսկի կառավարում հաճախորդի մակարդակով, հաճախորդների վարկունակության և գրավադրվող գույքի օբյեկտիվ և անկողմնակալ գնահատում
- ✓ Մոնիտորինգի արդյունքների և ռիսկերի հիմնական ցուցանիշների հիման վրա վարկերի հնարավոր կորուստների պահուստների ձևավորում

Տոկոսադրույքների ռիսկի կառավարում

- ✓ Բանկի տնտեսական արժեքի զգայունության վերլուծություն GAP մեթոդով,
- ✓ Բանկի տնտեսական արժեքի զգայունության վերլուծություն դյուրացիայի մեթոդով
- ✓ Ակտիվների-պարտավորությունների զուտ տոկոսային մարժայի վերլուծություն

Գործառնական ռիսկի կառավարում

- ✓ ԳՌ-ի բացահայտում, գնահատում և վերլուծություն,
- ✓ ԳՌ-ի իրադարձությունների և դեպքերի կանոնավոր դիտարկում
- ✓ ԳՌ-ի ցուցանիշների համակարգի ներդրում, դրանց մոնիտորինգ
- ✓ Բանկում ԳՌ-ի վերաբերյալ տեղեկացվածության բարձրացում,
- ✓ ԳՌ- ի նվազագույնի հասցնելը, այդ թվում `ստանդարտացված գործառույթների ներդրման և բանկային գործընթացների առավելագույն ավտոմատացման միջոցով,
- ✓ Բանկային գործընթացների արդյունավետության բարձրացում

Խորհրդին կից Ռիսկերի կառավարման կոմիտեում պարբերաբար զեկուցվում և քննարկվում են բանկի ռիսկայնության մակարդակը և ռիսկերի կառավարմանն ուղղված քայլերը: Բանկում մանրամասն քննարկվում են ֆինանսական և ոչ ֆինանսական ռիսկերի հաշվետվությունները, ներառյալ Բանկի վճարունակության, իրացվելիության, ֆինանսավորման, ինչպես նաև վարկային, շուկայական ռիսկերի և ոչ ֆինանսական ռիսկերի կարգավիճակը:

ՓԼ/ԱՖ քաղաքականություն

Համապատասխանության և ներքին հսկողության համակարգի խնդիրները

- ✓ ՀՀ օրենսդրությանը և Բանկի իրավասու մարմինների կողմից հաստատված ներքին իրավական ակտերին Բանկի գործունեության համապատասխանության ապահովում,
- ✓ Հաշվետվությունների արդյունավետ համակարգի ստեղծման և պահպանման միջոցառումների իրականացում,
- ✓ Բանկի գործունեության վրա նոր օրենսդրական ակտերի ազդեցության գնահատում,
- ✓ Փողերի լվացման, ապօրինի եկամուտների օրինականացման, ահաբեկչության ֆինանսավորման մեջ Բանկի ներգրավվածության բացահայտում և այդպիսի գործարքների դեմ ուղղված միջոցառումների իրականացում,
- ✓ Բանկում բիզնեսի գործընթացների և առկա խնդիրների վերաբերյալ ստուգումների կազմակերպում:

Ներքին աուդիտի եզրակացություն

Վերոնիկա Ազատյան
Ներքին աուդիտի ղեկավար

Ծնվել է 1986թ. հոկտեմբերի 24-ին:
2007թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի Ինֆորմատիկայի և կիրառական մաթեմատիկայի ֆակուլտետը:
2009թ. ավարտել է Հայաստանի Ամերիկյան համալսարանի Բիզնեսի և կառավարման դպրոցը:
Ունի ավելի քան 8 տարվա աշխատանքային փորձ աուդիտի ոլորտում:
2018թ. հուլիսի 2-ին նշանակվել է IDBank-ի Ներքին աուդիտի ծառայության ղեկավար:

IDBank

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ
Խորհրդի կողմից հաստատված է
Արձանագրություն թիվ 04

Վարդան Դիլանյան

«26» ապրիլի 2019թ.

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ
Վարչության նախագահ

Միհր Աբրահամյան

«26» ապրիլի 2019թ.

«Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանների» համապատասխանության վերաբերյալ եզրակացություն՝ համաձայն «ԱյԴի Բանկ» ՓԲԸ Ներքին աուդիտի ծառայության 28.02.2019թ. թիվ ՆԱԾ 02-01/19 հաշվետվության

Հիմք ընդունելով՝

- ՀՀ ԿԲ Խորհրդի թիվ 102-Ն որոշմամբ հաստատված՝ «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» Կանոնակարգ 4-ը,
- ՀՀ ԿԲ Խորհրդի կողմից 10.07.2007թ. թիվ 205-Ն որոշմամբ ընդունված «Բանկերի հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերը» և «Բանկերի հրապարակվող ֆինանսական հաշվետվությունների օրինակելի ձևերի լրացման ցուցումների» 1.16 կետը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներքին աուդիտի ծառայության կողմից ուսումնասիրվել են Բանկում ներքին հսկողության նվազագույն պայմանների իրականացումը:

Բանկի Խորհրդի կողմից 2018թ.-ին հաստատվել է Բանկի նոր վարչակազմակերպական կառուցվածքը, ինչի հիման վրա իրականացվում են ակտիվ գործողություններ՝ «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանների» ապահովման ուղղությամբ:

Իրականացվել է նաև հետստուգման աշխատանքներ՝ Ներքին աուդիտի վերստուգումների արդյունքում տրված առաջարկությունների հիման վրա, ինչպես նաև Բանկի ղեկավարության կողմից կառուցվածքային ստորաբաժանումներին տրված հանձնարարականների կատարման ընթացքի:

Կատարվում են համապատասխան աշխատանքներ հանձնարարականների իրականացման ուղղությամբ:

Ներքին աուդիտի
ծառայության ղեկավար՝ Վ. Ազատյան

3

Ֆինանսական հաշվետվություններ

Անկախ Աուդիտորի հաշվետվություն	33
Ֆինանսական դիրքի մասին համապարփակ հաշվետվություն	38
Համապարփակ եկամտի մասին հաշվետվություն	39
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն	40
Կապիտալի փոփոխության մասին համապարփակ հաշվետվություն	41

Անկախ աուդիտորական եզրակացություն

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
Հայաստանի Հանրապետություն, Երևան 0010,
Վ. Սարգսյանի փ. 26/1,
«Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն, 8-րդ հարկ
Հեռախոս + 374 (10) 595 999
Ինտերնետ www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի Բաժնետերերին և Խորհրդին

Կարծիք

Մենք իրականացրել ենք «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի (Բանկ) ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հաշվետու տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Բանկի ֆինանսական վիճակը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև վերջինիս գործունեության արդյունքները և դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) համաձայն:

Կարծիքի արտահայտման հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Նշված ստանդարտներով նախատեսված մեր պարտականությունները ներկայացված են մեր եզրակացության *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Բանկից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի օրենսգրքի (ՀԷՄՍԽ օրենսգիրք) և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և մենք կատարել ենք էթիկային վերաբերող մեր պարտականություններն այս պահանջներին և ՀԷՄՍԽ օրենսգրքին համապատասխան: Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան՝ մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար:

Աուդիտի առանցքային հարցեր

Աուդիտի առանցքային հարցեր են հանդիսանում այն հարցերը, որոնք մեր մասնագիտական կարծիքով, առավել էական նշանակություն ունեն հաշվետու տարվա ֆինանսական հաշվետվությունների մեր աուդիտի համար: Մենք անդրադարձել ենք այս հարցերին ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընդհանուր շրջանակներում և վերջիններիս վերաբերյալ մեր կարծիքը ձևավորելիս և չենք արտահայտում առանձին կարծիք այս հարցերի վերաբերյալ:

Սպասվող պարտքային վնաս հաճախորդներին տրված վարկերի գծով	
Ներկայացված է ֆինանսական հաշվետվություններին կից Օանոթագրություն 23-ի (բ) կետում և Օանոթագրություն 13-ում:	
Աուդիտի առանցքային հարցեր	*Ինչպես ենք անդրադարձել հարցին աուդիտի ընթացքում*
Հաճախորդներին տրված վարկերը կազմում են ակտիվների 50%-ը և ներառում են սպասվող պարտքային վնասի գծով պահուստը, որը կանոնավոր հիմունքով գնահատվում է և զգայուն է կիրառվող ենթադրությունների նկատմամբ: 2018թ. հունվարի 1-ից Բանկը կիրառում է սպասվող պարտքային վնասի գծով պահուստի գնահատման նոր մոդել, որը ղեկավարությունից պահանջում է կիրառել մասնագիտական դատողություններ և կատարել ենթադրություններ հետևյալ առանցքային հարցերի հետ կապված. – պարտքային ռիսկի էական աճի և հաճախորդներին տրված վարկերի գծով պարտականությունները չկատարելու դեպքերի ժամանակին բացահայտում (բաշխում 1-ին, 2-րդ և 3-րդ փուլերի միջև՝ ՖՀՄՍ 9 *«Ֆինանսական գործիքներ»* ստանդարտի (այսուհետ՝ ՖՀՄՍ 9) համաձայն), – պարտականությունների չկատարման հավանականության և պարտականությունների չկատարման դեպքում առաջացող վնասի գնահատում, – լրացուցիչ ճշգրտման գնահատում՝ հեռանկարի վերաբերյալ տեղեկատվությունը ներառելու հետ կապված, – ակնկալվող դրամական միջոցների հոսքերի կանխատեսում 3-րդ փուլ դասակարգված հաճախորդներին տրված վարկերի համար:	Մենք վերլուծել ենք սպասվող պարտքային վնասի գնահատմանը վերաբերող Բանկի մեթոդաբանության և քաղաքականության առանցքային դրույթները ՖՀՄՍ 9-ի պահանջների հետ համապատասխանության տեսանկյունից՝ գործընթացում ներառելով նաև ֆինանսական ռիսկերի կառավարման գծով մեր մասնագետներին: Սպասվող պարտքային վնասի գնահատման հետ կապված ղեկավարության կողմից կատարած մասնագիտական դատողությունների և ենթադրությունների տեղին լինելը վերլուծելու համար մենք մեր աուդիտորական ընթացակարգերում ներառել ենք հետևյալը. – իրավաբանական անձանց տրված վարկերի համար գնահատել և ստուգել ենք վարկերի բաշխումը փուլերին վերահսկող համակարգի կառուցվածքը և գործառնական արդյունավետությունը: – իրավաբանական անձանց տրված վարկերի ընտրանքի համար ստուգել ենք, թե արդյոք փուլերը ճիշտ են որոշված Բանկի կողմից՝ վերլուծելով ֆինանսական և ոչ ֆինանսական տեղեկատվությունը, ինչպես նաև Բանկի կողմից կիրառված ենթադրությունները և մասնագիտական դատողությունները: – իրավաբանական անձանց տրված վարկերի ընտրանքի համար ստուգել ենք պարտականությունների հավանականության հաշվարկի համար ելակետային տվյալների ճշգրտությունը: – 1-ին և 2-րդ փուլերին բաշխված հաճախորդներին տրված վարկերի համար, որոնց դեպքում սպասվող պարտքային վնասը գնահատվում է հավաքական հիմունքով, ստուգել ենք համապատասխան մոդելների տեղին լինելը և կիրառումը և համեմատել ենք մոդելի ելակետային տվյալներն առաջնային փաստաթղթերի տվյալների հետ ընտրանքային կարգով. – վերլուծել ենք հեռանկարի վերաբերյալ տեղեկատվությունը ներառելու հետ

Հաճախորդներին տրված վարկերի մեծ ծավալի պատճառով, սպասվող պարտքային վնասի նոր մոդելի կիրառումը և վերջինիս հետ կապված գնահատմանը վերաբերող անորոշությունը դիտարկվում են որպես աուդիտի առանցքային հարց:	կապված լրացուցիչ ճշգրտման տեղին լինելը, համեմատություն կատարելով մեր սեփական գնահատման հետ՝ հաշվի առնելով ներկայիս տնտեսական իրավիճակը և գործարար միջավայրը փոխառուների որոշ դասերի հետ կապված: – 3-րդ փուլի վարկերի ընտրանքի համար, որոնց դեպքում սպասվող պարտքային վնասը գնահատվում է առանձին հիմունքով, գնահատել ենք ապագա դրամական միջոցների կանխատեսման համար Բանկի կողմից կիրառված ենթադրությունները, ներառյալ՝ իրացվելի գրավի գծով մուտքերի գնահատումը և վերջինիս իրացման ակնկալվող պայմանները՝ հիմք ընդունելով մեր պատկերացումները և շուկայում հրապարակայնորեն հասանելի տեղեկատվությունը: Մենք հատուկ ուշադրություն ենք դարձրել հաճախորդներին տրված այն վարկերի վրա, որոնք հավանաբար կարող են առավելագույնս նշանակալի ազդեցություն ունենալ ֆինանսական հաշվետվությունների վրա: – անհատներին տրված վարկերի համար ստուգել ենք սպասվող պարտքային վնասի հաշվարկի ելակետային տվյալների ամբողջականությունը և ճշգրտությունը վերահսկող համակարգի կառուցվածքը և գործառնական արդյունավետությունը, վարկերի գծով վճարումների ուշացումների և մարումների ժամանակին արտացոլումը համապատասխան համակարգերում և վարկերի բաշխումը փուլերին: Ընտրանքային կագով համեմատել ենք ելակետային տվյալները հիմնավորող փաստաթղթերի տվյալների հետ: Մենք գնահատել ենք սպասվող պարտքային վնասի հաշվարկի Բանկի մեթոդաբանության կանխատեսման կարողությունը՝ համեմատելով 2018թ. հունվարի 1-ի դրությամբ կատարած գնահատումները 2018թ. փաստացի արդյունքների հետ: Բացի այդ մենք գնահատել ենք, թե որքան պատշաճորեն են արտացոլում ֆինանսական հաշվետվությունների բացահայտումները Բանկի ենթարկվածությունը պարտքային ռիսկին:

ՖՀՄՍ 9 *«Ֆինանսական գործիքներ»* ստանդարտի կիրառում	
Ներկայացված է ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություն 3-ում և Ծանոթագրություն 4-ում:	
Աուդիտի առանցքային հարցեր	*Ինչպես ենք անդրադարձել հարցին աուդիտի ընթացքում*
Ֆինանսական գործիքների օգտագործումը Բանկի գործունեության հիմնական մասն է, և ֆինանսական ակտիվները կազմում է Բանկի ակտիվների գերակշիռ մասը: 2018թ. հունվարի 1-ից Բանկը կիրառում է ֆինանսական գործիքների հաշվապահական հաշվառման նոր ստանդարտ՝ ՖՀՄՍ 9-ը, որը նախատեսում է ֆինանսական ակտիվների դասակարգման և չափման էական փոփոխություններ: Հաշվի առնելով նոր պահանջների կիրառումը, որոնք էականորեն փոխում են ֆինանսական գործիքների հաշվապահական հաշվառման սկզբունքները, ինչպես նաև այն նշանակալի ազդեցությունը, որը նոր ստանդարտն ունեցել է 2018թ. հունվարի 1-ի դրությամբ մնացորդների, Բանկի ֆինանսական վիճակի և գործունեության արդյունքների վրա, այս հարցը դիտարկվում են որպես աուդիտի առանցքային հարց:	Մենք վերլուծել ենք ֆինանսական ակտիվների կառավարման բիզնես մոդելների որոշման չափանիշները՝ հարցումներ ուղղելով պատասխանատու աշխատակիցներին, ուսումնասիրելով Բանկի ներքին փաստաթղթերը և վերլուծելով ներքին բիզնես գործընթացները ֆինանսական գործիքների ընտրված խոշոր պորտֆելների գծով: Մենք ստուգել ենք, թե արդյոք Բանկն իրականացրել է պատշաճ գնահատում, թե արդյոք պայմանագրային դրամական միջոցների հոսքերը հանդիսանում են միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ՝ վերլուծելով հիմնավորող փաստաթղթերը ֆինանսական ակտիվների ընտրանքի համար: Մենք նաև գնահատել ենք, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները պատշաճ կերպով են բացահայտում ֆինանսական գործիքների դասակարգման և չափման սկզբունքները, ինչպես նաև Բանկի կողմից ՖՀՄՍ 9-ի կիրառման ազդեցությունը:

Այլ տեղեկատվություն

Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Այլ տեղեկատվությունը ներառում է տարեկան հաշվետվությունում պարունակվող տեղեկատվությունը, սակայն չի ներառում ֆինանսական հաշվետվությունները և վերջիններիս վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացությունը: Ակնկալվում է, որ տարեկան հաշվետվությունը կտրամադրվի մեզ աուդիտորական եզրակացության ստորագրման ամսաթվից հետո:

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր եզրակացությունը չի անդրադառնում այլ տեղեկավությանը, և մենք չենք արտահայտի որևէ հավաստիացում այդ տեղեկատվության վերաբերյալ:

Ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված մեր պատասխանատվությունն է ծանոթանալ վերը նշված այլ տեղեկատվությանը, երբ այն դառնա հասանելի, և այդ տեղեկատվությանը ծանոթանալիս դիտարկել, թե արդյոք այլ տեղեկատվությունն էականորեն չի համապատասխանում ֆինանսական հաշվետվություններին կամ աուդիտի ընթացքում մեր կողմից ձեռք բերված տեղեկատվությանը կամ կարող է այլ կերպ ճշգրիտ ներկայացված չլինել:

Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ համաձայն ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ պատրաստելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Բանկի անընդհատ գործելու կարողության գնահատման համար, բացահայտելով, կիրառելի լինելու դեպքում, անընդհատությանը վերաբերող հարցերը և կիրառելով անընդհատության հիմունքով հաշվառումը, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է կամ լուծարել Բանկը կամ դադարեցնել վերջինիս գործունեությունը, կամ չունի դրանից խուսափելու իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են վերահսկել Բանկի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացը:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ երաշխիք առ այն, որ ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցված, զերծ են սխալի կամ խարդախության պատճառով առաջացած էական խեղաթյուրումներից և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ երաշխիքը հավաստիացման բարձր աստիճան է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ների համաձայն աուդիտի իրականացման ընթացքում միշտ հնարավոր կլինի հայտնաբերել էական խեղաթյուրումը՝ վերջինիս առկայության դեպքում: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե կարելի է պատճառաբանված կերպով ակնկալել, որ, առանձին կամ միասին վերցված, ազդեցություն կունենան այս ֆինանսական հաշվետվությունների հիման վրա օգտագործողների կողմից կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ների համաձայն իրականացվող աուդիտի մաս՝ մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական թերահավատություն աուդիտի ընթացքում: Մենք նաև՝

- հայտնաբերում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, մշակում և իրականացնում ենք այդ ռիսկերին անդրադարձող աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ են և համապատասխան՝ մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի մեծ է քան սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել գաղտնի համաձայնություն, կեղծիք, միտումնավոր բացթողումներ, խեղաթյուրումներ կամ ներքին վերահսկողության համակարգի շրջանցում:

- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին վերահսկողության համակարգի վերաբերյալ՝ տվյալ հանգամանքներում տեղին աուդիտորական ընացակարգեր մշակելու, բայց ոչ Բանկի ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով:

- գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և հարակից բացահայտումների հիմնավորվածությունը:

«ԱյԴի Բանկ» ՓԲԸ
Անկախ աուդիտորական եզրակացություն
էջ 6

– կատարում ենք եզրահանգում ղեկավարության կողմից անընդհատության հիմունքով հաշվառում կիրառելու տեղին լինելու վերաբերյալ և, հիմք ընդունելով ձեռք բերված աուդիտորական ապացույցները, կատարում ենք հետևություն, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է լուրջ կասկածներ հարուցել Բանկի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրակացնենք, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, այդ բացահայտումների ոչ համապատասխան լինելու դեպքում՝ ձևափոխենք մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ հանգամանքները կարող են հանգեցնել Բանկի կողմից անընդհատության հիմունքով գործունեության իրականացման դադարեցմանը:

– գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները և գնահատում ենք, թե արդյոք ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են իրենց հիմքում ընկած գործառնություններն ու իրադարձությունները այնպիսի ձևով, որը թույլ է տալիս ապահովել ճշմարիտ ներկայացում:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, աուդիտի ընթացքում առաջացած նշանակալից հարցերի, այդ թվում՝ աուդիտի ընթացքում հայտնաբերված ներքին վերահսկողության համակարգի էական թերությունների մասին:

Մենք նաև ներկայացնում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հայտարարություն առ այն, որ մենք հետևում ենք էթիկայի համապատասխան պահանջներին և տեղեկացնում ենք նրանց այն բոլոր հարաբերությունների և այլ հարցերի մասին, որոնք խելամիտ կերպով կարող են համարվել որպես մեր անկախության վրա ազդեցություն ունեցող և, կիրառելի լինելու դեպքում, պաշտպանություն ապահովող համապատասխան միջոցների մասին:

Կառավարման օղակներում ներգրավված անձանց տեղեկացված հարցերից մենք ընտրում ենք այն հարցերը, որոնք առավել էական ազդեցություն ունեն հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար և, հետևաբար, հանդիսանում են աուդիտի առանցքային հարցեր: Մենք ներկայացնում ենք այս հարցերը մեր աուդիտորական եզրակացությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ կանոնակարգով չի թույլատրվում հարցի հանրային բացահայտում, կամ երբ հազվադեպ դեպքերում մենք որոշում ենք, որ հարցը չպետք է ներկայացվի մեր եզրակացությունում, քանի որ ներկայացման բացասական հետևանքներն ըստ ողջամիտ ակնկալիքների կարող են գերակշռել ներկայացման հետ կապված հանրային հետաքրքրվածության առավելությունները:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման համար հիմք հանդիսացող աուդիտի իրականացման համար պատասխանատու գործընկերն է՝

Տիգրան Գասպարյան
Ղեկավար գործընկեր, «Քեյ-Փի-էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի տնօրեն

«Քեյ-Փի-էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
26 ապրիլի 2019թ.

Ֆինանսական հաշվետվություններ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծնթգ.	2018թ. հազ. դրամ	2017թ.* հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	9	11,260,756	17,229,253
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով իրական արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր			
- Բանկի կողմից պահվող	10	4,728,200	29,406,955
Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր			
- Բանկի կողմից պահվող	10	15,136,723	-
- Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված	10	5,587,003	-
Ածանցյալ ֆինանսական ակտիվներ		-	9,952
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ	11	13,068,992	11,476,427
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ	12	3,429,813	6,493,486
Հաճախորդներին տրված վարկեր	13	61,470,502	57,763,789
Ընթացիկ հարկային ակտիվ		139,189	142,648
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	14	5,061,844	5,034,278
Այլ ակտիվներ	15	2,190,934	1,301,201
Ընդամենը ակտիվներ		**122,073,956**	**128,857,989**
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ		1,337	229,753
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ	16	5,245,790	4,988,819
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ	17	6,771,902	-
Թողարկված պարտքային արժեթղթեր	18	10,823,040	10,815,059
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ	19	56,320,356	64,651,008
Այլ փոխառություններ	20	691,990	1,357,706
Հետաձգված հարկային պարտավորություններ	8	617,324	1,486,487
Այլ պարտավորություններ	21	1,338,095	943,640
Ընդամենը պարտավորություններ		**81,809,834**	**84,472,472**
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Բաժնետիրական կապիտալ	22	33,971,850	33,971,850
Էմիսիոն եկամուտ		5,014,099	5,014,099
Շենքերի վերագնահատումից աճ		110,808	156,499
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ		106,977	3,342,351
Չբաշխված շահույթ		1,060,388	1,900,718
Ընդամենը սեփական կապիտալ		**40,264,122**	**44,385,517**
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		**122,073,956**	**128,857,989**

* Բանկը սկսել է կիրառել ՖՀՄՍ 9-ը 2018թ. հունվարի 1-ից: Ստանդարտին անցման ընտրված մեթոդի համաձայն՝ համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվել (Ծանոթագրություն 2 (ե)): ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում Բանկը փոխել է որոշ հոդվածների ներկայացումը, համադրելի տեղեկատվությունը համապատասխանաբար վերաներկայացվել է (Ծանոթագրություն 3 (ճ)):

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն

2018 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	Ծնթգ.	2018թ. հազ. դրամ	2017թ.* հազ. դրամ
Այդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ	5	11,634,191	22,036,520
Տոկոսային ծախս	5	(4,510,499)	(13,454,144)
Զուտ տոկոսային եկամուտ		**7,123,692**	**8,582,376**
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով եկամուտ		738,970	559,827
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով ծախս		(454,591)	(310,229)
Միջնորդավճարների և այլ վճարների տեսքով զուտ եկամուտ		**284,379**	**249,598**
Զուտ եկամուտ փոխարժեքային տարբերություններից		361,857	468,190
Զուտ եկամուտ/ (վնաս) շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող այլ ֆինանսական գործիքներից		165,636	(255,836)
Զուտ իրացված օգուտ ներդրումային արժեթղթերի գծով		1,481,635	911,472
Զուտ այլ գործառնական եկամուտ		496,934	979,287
Գործառնական եկամուտ		**9,914,133**	**10,935,087**
Զուտ արժեզրկումից կորուստ ֆինանսական գործիքների գծով	6	(1,813,773)	(4,060,115)
Անձնակազմի գծով ծախսեր		(3,002,806)	(2,814,399)
Այլ ընդհանուր վարչական ծախսեր	7	(2,204,748)	(1,683,991)
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը		**2,892,806**	**2,376,582**
Շահութահարկի գծով ծախս	8	(709,836)	(529,802)
Շահույթ տարվա համար		**2,182,970**	**1,846,780**
Այլ համապարփակ (վնաս)/ եկամուտ՝ առանց շահութահարկի			
Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս			
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստի շարժ.			
- իրական արժեքի զուտ փոփոխություն	8	(86,988)	2,146,088
- շահույթ կամ վնաս վերադասակարգված զուտ գումար	8	(1,185,308)	(729,178)
Ընդամենը հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս		*(1,272,296)*	*1,416,910*
Հոդվածներ, որոնք չեն վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս			
Վերագնահատված հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառք	8	(45,691)	-
Ընդամենը հոդվածներ, որոնք չեն վերադասակարգվի որպես շահույթ կամ վնաս		*(45,691)*	-
Այլ համապարփակ (վնաս)/ եկամուտ տարվա համար՝ առանց շահութահարկի		**(1,317,987)**	**1,416,910**
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար		**864,983**	**3,263,690**

* Բանկը սկսել է կիրառել ՖՀՄՍ 9-ը 2018թ. հունվարի 1-ից: Ստանդարտին անցման ընտրված մեթոդի համաձայն՝ համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվել (Ծանոթագրություն 2 (ե)): ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում Բանկը փոխել է որոշ հոդվածների ներկայացումը, համադրելի տեղեկատվությունը համապատասխանաբար վերաներկայացվել է (Ծանոթագրություն 3 (ճ)):

9-ից 111-ը էջերում ներկայացված ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2019թ. ապրիլի 25-ին և ստորագրվել են վերջինիս անունից:

Mher Abrahamyan
Digitally signed by Mher Abrahamyan
Date: 2020.01.14 12:21:13 +04'00'

Մհեր Աբրահամյան
Վարչության նախագահ

Անուշիկ Խաչատրյան
Գլխավոր հաշվապահ

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծնթգ.	2018թ. հազ. դրամ	2017թ.* հազ. դրամ
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ			
Ստացված տոկոսներ		11,012,778	23,815,358
Վճարված տոկոսներ		(4,822,049)	(14,586,776)
Ստացված միջնորդավճարներ և այլ վճարներ		738,970	559,827
Վճարված միջնորդավճարներ և այլ վճարներ		(454,591)	(310,229)
Զուտ վճարումներ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների գծով		(52,828)	(20,348)
Զուտ մուտքեր արտարժութային գործառնությունների գծով		638,962	343,087
Այլ ստացված եկամուտ		381,597	885,476
Այլ ընդհանուր վարչական ծախսերի գծով վճարումներ		(4,768,296)	(3,868,686)
Գործառնական ակտիվների նվազում/(աճ)			
Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ		3,075,123	1,229,639
Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ		(1,877,157)	(10,886,898)
Հաճախորդներին տրված վարկեր		(9,413,928)	151,659,011
Այլ ակտիվներ		(208,535)	2,581,737
Գործառնական պարտավորությունների (նվազում)/աճ			
Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ		327,598	(61,167,608)
Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ		6,757,099	-
Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ		(7,569,030)	(101,202,329)
Այլ պարտավորություններ		499,054	(30,021)
Գործառնական գործունեության համար օգտագործված զուտ դրամական միջոցներ՝ նախքան շահութահարկի վճարումը		**(5,735,233)**	**(10,998,760)**
Վճարված շահութահարկ		(33,000)	(19,689)
Գործառնական գործունեության համար օգտագործված դրամական միջոցների հոսքեր		**(5,768,233)**	**(11,018,449)**
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ			
Ներդրումային արժեթղթերի ձեռքբերում		(5,194,557)	(8,547,725)
Մուտքեր ներդրումային արժեթղթերի վաճառքից և մարումից		6,457,542	460,795
Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում		(593,278)	(596,013)
Ներդրումային գործունեությունից ստացված/ներդրումային գործունեության համար (օգտագործված) դրամական միջոցների հոսքեր		**669,707**	**(8,682,943)**
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ			
Մուտքեր պարտքային արժեթղթերի թողարկումից	18	2,418,750	8,336,627
Թողարկված պարտքային արժեթղթերի մարում	18	(2,422,500)	-
Այլ ստացված փոխառություններ	20	315,235	414,599
Այլ փոխառությունների մարում	20	(968,962)	(2,305,099)
Ֆինանսավորման գործունեության համար (օգտագործված)/ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական միջոցների հոսքեր		**(657,477)**	**6,446,127**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ նվազում		**(5,756,003)**	**(13,255,265)**
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		(212,494)	423,029
Դրամական միջոցները և դրանց համարժեքները (համախառն) տարեսկզբի դրությամբ		17,229,253	30,061,489
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ	9	**11,260,756**	**17,229,253**

* Բանկը սկսել է կիրառել ՖՀՄՍ 9-ը 2018թ. հունվարի 1-ից: Ստանդարտին անցման ընտրված մեթոդի համաձայն՝ համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվել (Ծանոթագրություն 2 (ե)): ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում Բանկը փոխել է որոշ հոդվածների ներկայացումը, համադրելի տեղեկատվությունը համապատասխանաբար վերաներկայացվել է (Ծանոթագրություն 3 (ճ)):

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ

հազ. դրամ	Բաժնետի-րական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Շենքերի վերագնա-հատումից աճ	Ներդրումային արժեթղթերի վերագնահատման պահուստ	Չբաշխված շահույթ	Ընդամենը սեփական կապիտալ
Մնացորդը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ	33,971,850	5,014,099	156,499	1,925,441	53,938	41,121,827
Ընդամենը համապարփակ եկամուտ						
Շահույթ տարվա համար	-	-	-	-	1,846,780	1,846,780
Այլ համապարփակ եկամուտ						
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	-	-	-	2,146,088	-	2,146,088
Շահույթ կամ վնաս փոխանցված վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	-	-	-	(729,178)	-	(729,178)
Ընդամենը այլ համապարփակ եկամուտ	-	-	-	1,416,910	-	1,416,910
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	-	-	-	**1,416,910**	**1,846,780**	**3,263,690**
Մնացորդը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**33,971,850**	**5,014,099**	**156,499**	**3,342,351**	**1,900,718**	**44,385,517**
Մնացորդը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	33,971,850	5,014,099	156,499	3,342,351	1,900,718	44,385,517
Ճշգրտում ՖՀՄՍ 9-ի սկզբանական կիրառման ժամանակ՝ առանց հարկի (Ծնթգ. 4)	-	-	-	(1,963,078)	(3,023,300)	(4,986,378)
Վերահաշվարկված մնացորդը 2018թ. հունվարի 1-ի դրությամբ	33,971,850	5,014,099	156,499	1,379,273	(1,122,582)	39,399,139
Ընդամենը համապարփակ եկամուտ						
Շահույթ տարվա համար	-	-	-	-	2,182,970	2,182,970
Այլ համապարփակ վնաս						
Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ						
- Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	-	-	-	(86,988)	-	(86,988)
- Շահույթ կամ վնաս փոխանցված ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	-	-	-	(1,185,308)	-	(1,185,308)
Շենքերի վերագնահատման պահուստի զուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի	-	-	(45,691)	-	-	(45,691)
Ընդամենը այլ համապարփակ եկամուտ	-	-	(45,691)	(1,272,296)	-	(1,317,987)
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	-	-	**(45,691)**	**(1,272,296)**	**2,182,970**	**864,983**
Մնացորդը 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	**33,971,850**	**5,014,099**	**110,808**	**106,977**	**1,060,388**	**40,264,122**

* Բանկը սկսել է կիրառել ՖՀՄՍ 9-ը 2018թ. հունվարի 1-ից: Ստանդարտին անցման ընտրված մեթոդի համաձայն՝ համադրելի տեղեկատվությունը չի վերահաշվարկվել (Ծանոթագրություն 2 (ե)): ՖՀՄՍ 9-ի կիրառման արդյունքում Բանկը փոխել է որոշ հոդվածների ներկայացումը, համադրելի տեղեկատվությունը համապատասխանաբար վերաներկայացվել է (Ծանոթագրություն 3 (ճ)):

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

RA, Yerevan, 0010, Vardanants 13
Phone: (+374 10) 59 33 33,
E-mail: info@idbank.am
URL: www.idbank.am